

ՆԱԻՐԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԲԱՌԻ ԵՎ ՂԱՐԶՎԱԾՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Բառի և դարձվածքի հարաբերակցության խնդիրը լեզվաբանության կարևորագույն հարցերից է: Նրա ճիշտ ըմբռնումը թույլ է տալիս ուսումնասիրել և լուծել դարձվածաբանական շատ խնդիրներ:

Բառի և դարձվածքի հարաբերակցության հարցի շուրջ լեզվաբանության մեջ գոյություն ունեն տարբեր կարծիքներ:

Որոշ լեզվաբաններ փորձում են նույնացնել բառն ու դարձվածքը և գտնում, որ վերջինս բառի տարակազմ տարբերակն է: Այսպես, ռոմանական լեզվաբանության հիմնադիր Ֆ. Դիցը, դարձվածային միավորն անվանելով «վերլուծական բառ», այն ընդգրկում է ֆրանսերենի բառային միավորների կառուցվածքային տեսակների կազմում և ուսումնասիրում «Բառաբարդման» բաժնում¹: Ֆ. Բրյունոն նշված կազմավորումները դասում է պատկերավոր արտահայտությունների շարքը², ֆրանսիացի բառագետ Լ. Գիլբերը «վերլուծական բառերը» դիտարկում է որպես բարդ բառույթներ, որոնք ծագել են շարակարգային բառակազմության արդյունքում³: Պ. Գիրոն գտնում է, որ վերլուծական լեզվամիավորների օժանդակ տարրերը համարժեք են բառակազմական ածանցային ձևայիններին, իսկ *faire* բայը, որի օգնությամբ ստեղծվում են շատ «վերլուծական բայեր», համարում է բառակազմական նախածանց:

Հայտնի է, որ դարձվածաբանության և բառագիտության միջև գոյություն ունի սերտ կապ, որն առաջին հերթին պայմանավորված է դարձվածաբանության համար բառի՝ «շինանյութ» լինելով⁴: Այդ իսկ պատճառով դարձվածապաշարի և բառապաշարի միջև կան որոշ նմանություններ, որոնք արտահայտվում են ինչպես քերականության և բառակազմության ոլորտում (դարձվածքը և բառը կարող են ունենալ ձևաբանական հատկանիշներ, լինել նախադասության անդամներ, ունենալ լրացում կամ որոշիչ, հիմք ծառայել նոր բառերի

¹ Տես Բ. Diez, Grammatik der romanischen Sprachen. Fünfte Auflage. Bonn, 1882, էջ 737, 741-742, 755-759:

² Տես Բ. Brunot, Histoire de la langue française. T. I, 1905, էջ 288-291:

³ Տես Լ. Guilbert, La créativité lexicale. P., 1975, էջ 249:

⁴ Տես Ա. Գ. Назарян, Фразеология современного французского языка. М., 1987, էջ 15:

կազմության համար), այնպես էլ անվանագիտության ոլորտում (դարձվածքը և բառը կարող են արտահայտել օբյեկտիվ իրականության երևույթներ, որոնք կապված են մարդու գործունեության տարբեր տեսակների հետ) և այլն:

Սակայն անհերքելի է նաև այն փաստը, որ դարձվածքի և բառի միջև կան ոչ միայն ընդհանուր գծեր, այլև բազմաթիվ սկզբունքային տարբերություններ⁵: Ուստի չի կարելի համաձայնել այն լեզվաբանների հետ, ովքեր փորձում են դրանք նույնացնել:

Այսպես, չնայած այն բանին, որ դարձվածքի բաղադրիչները չեն դարձում բառ լինելուց, այնուամենայնիվ նրանց գործառնությունը ստանում է յուրահատուկ բնույթ⁶. նրանք «կորցնում են իրենց առարկայական վերաբերությունը, չեն կարողանում հանդես գալ որպես նախադասության անդամ կամ հարաբերակցվել նրա մյուս անդամների հետ, որոնց հետ հարաբերակցվում է դարձվածքն ամբողջությամբ»⁷: «Այս և նման տարբերությունները հաշվի առնելը, — նշում է Ա. Յ. Նազարյանը, — դարձվածաբանության առարկայի լեզվաբանական էության գիտական հիմնավորման և բառագիտության առարկայից նրա սահմանազատման կարևոր պայմանն է»⁸:

Ինչպես արդեն նշվեց, որոշ լեզվաբաններ անտեսում են դարձվածքի ու բառի միջև եղած սկզբունքային տարբերությունները և չափազանցնում են նրանց գծերի ընդհանրությունները: Սասնավորապես, այդպես են վարվում այն հետազոտողները, ովքեր գտնում են, որ դարձվածային միավորը համընթեք է բառին: Դարձվածքի բառին համարժեքության տեսությունը ծագել է Շ. Բալլիի նույնականացման տեսության ազդեցությամբ: Այն հիմնված է դարձվածքի և բառի հարաբերակցելիության միակողմանի հասկացողության, ինչպես նաև այդ երկու լեզվական կազմավորումների գործառական հատկանիշների նույնացման վրա, ինչի հետևանքով դարձվածային միավորը համարվում է բառի տարակազմ տարբերակը⁹: Այս տեսության կողմնակիցները հենվում են դարձվածքի և բառի գործառական նմանության, նրանց շարահյուսական գործառնությունների մասնակի, երբեմն էլ՝ լրիվ համընկման վրա, ինչպես նաև որոշ դարձվածային միավորների այն ունակության վրա, ըստ որի նրանք կարող են

⁵ Տե՛ս В. Н. Телия, Что такое фразеология. М., 1966, էջ 29:

⁶ Տե՛ս А. И. Смирницкий, Лексикология английского языка. М., 1956, էջ 207:

⁷ А. В. Куниц, Английская фразеология. М., 1970, с. 141.

⁸ А. Г. Назарян, նշվ. աշխ., էջ 16:

⁹ Տե՛ս З. Н. Левит, К проблеме аналитического слова в современном французском языке. М., 1968, էջ 12:

հանդես գալ այս կամ այն նախադասության անդամի պաշտոնում: Սակայն այս տեսությունը ունի լուրջ թերություններ, որոնք ի հայտ են գալիս դրան մոտիկից ծանոթանալիս:

Ամենից առաջ դարձվածքի՝ բառին համարժեքության տեսությունը հերքվում է ժամանակակից ֆրանսերենում դարձվածքների ճնշող մեծամասնության բառային հոմանիշներ չունենալու պատճառով. նրանց իմաստը կարող է արտահայտվել միայն բառակապակցության կամ նախադասության միջոցով: Այս առումով շատ արժեքավոր է Ա. Գ. Նազարյանի և Ժ. Ս. Արուսյունովայի կատարած հետազոտությունը, որտեղ ցույց է տրվում, որ ժամանակակից ֆրանսերենի դարձվածապաշարում այն դարձվածքները, որոնք ունեն բառային հոմանիշներ, կազմում են 12,5%: Ղեռ ավելին, դարձվածքների զգալի մասը, հարաբերակցվելով վերաբերյալին, նրա միակ անվանումն է¹⁰: Գմմտ. *coiffer sainte Catherine* «տանը մնալ, պառավ աղջիկ դառնալ», *faire danser l'anse du panier* «մթերք զնելիս տիրոջը խաբել», *violon d'Ingres* «հոբի, սիրած զբաղմունք» և այլն: Այս և նման շատ այլ օրինակները համոզիչ կերպով ապացուցում են այն տեսակետի սխալ լինելն, ըստ որի «բառային կազմի հետ հոմանիշության կապեր չունեցող դարձվածքներ չկան»¹¹:

Սակայն, պետք է նշել, որ համարժեքության տեսությունը կիրառելի չէ նույնիսկ այն դարձվածքների նկատմամբ, որոնք ունեն բառային հոմանիշներ: Դարձվածային միավորի բովանդակային կառուցվածքն ավելի բարդ է, քան բառի բովանդակային կառուցվածքը, հատկապես հարանշանակության պլանում¹², ինչն էլ թույլ չի տալիս այդ երկու լեզվական միավորների համարժեք փոխադարձ փոխարինելիությունը խոսքում:

Դարձվածքի՝ բառին համարժեքության տեսության կողմնակիցների մյուս փաստարկն այդ երկու լեզվական միավորների շարահյուսական գործառույթների համընկնումն է, սակայն դա նույնպես անհիմն է, քանի որ որպես նախադասության անդամ կարող են հանդես գալ ոչ միայն բառերն ու դարձվածային միավորները, այլ նաև դարձվածային բնույթ չունեցող շատ բառակապակցություններ, ինչպես կայուն, այնպես էլ ազատ¹³: Այստեղից հետևում է որ, ցանկացած տարակազմ լեզվական կազմավորում կարող է լինել բառի համարժեք:

¹⁰ Տե՛ս Ա. В. Кулин, За дальнейшее укрепление позиций фразеологии как лингвистической дисциплины. Тр. Самарк. гос. ун-та им. А. Навои. Новая сер.-Вып. 219. Вопросы фразеологии.-Самарканд, 1972, էջ 9:

¹¹ В. М. Никитин, Проблема классификации фразеологизмов и их относительная устойчивость и варьирование. Проблемы устойчивости и вариативности фразеологических единиц. Тула, 1968, с. 69.

¹² Տե՛ս А. Г. Назарян, նշվ. աշխ., էջ 15:

¹³ Տե՛ս А. В. Кулин, Английская фразеология, էջ 18-19:

Համարժեքության տեսության բացասական կողմերից է նաև այն, որ նրա կողմնակիցներն անտեսում են դարձվածքի և բառի միջև եղած իմաստա-
յին տարբերությունները, որոնք գլխավորապես պայմանավորված են բառի բո-
վանդակային կառուցվածքի համեմատ դարձվածքի բովանդակային կառուց-
վածքի առավել բարդությամբ: Նման մոտեցումը հանգեցնում այն բանին, որ
դարձվածքների շարքին դասվում են իմաստային պլանում բոլորովին տարա-
սեռ բառակապակցությունները, այդ թվում՝ ազատ կապակցությունները:

Բացի այդ, համարժեքության տեսության կողմնակիցները հաշվի չեն
առնում այդ երկու լեզվական միավորների ամենակարևոր տարբերությունը
լեզվում նրանց ունեցած գործառույթային դերը:

Դարձվածքի և բառի հարաբերակցության ճիշտ ըմբռնումն ու սահմա-
նումը հնարավոր է միայն այդ երկու լեզվական միավորների կառուցվածքային,
իմաստային և գործառույթային հատկանիշների բազմակողմանի համեմատա-
կան վերլուծության դեպքում: Այդ վերլուծությունը ցույց է տալիս, որ, ըստ
նշված հատկանիշների, դարձվածային միավորը երբեք չի համընկնում բառի
հետ¹⁴: Ահա թե ինչու ավելի ճիշտ կլինի խոսել դարձվածքի ու բառի հարաբե-
րակցելիության և ոչ թե նրանց համարժեքության մասին: Հարաբերակցելիու-
թյան տեսությունը թույլ է տալիս բացահայտել դարձվածային միավորի առանձ-
նահատկությունները որպես որակապես նոր լեզվական կազմավորում:

Այսպիսով, չնայած դարձվածաբանությունը սերտորեն կապված է բա-
ռագիտության հետ, այնուամենայնիվ անհնար է ժխտել այդ երկու լեզվաբանա-
կան գիտաճյուղերի միջև գոյություն ունեցող սկզբունքային տարբերություն-
ները:

Խոսելով դարձվածքի և բառի տարբերությունների մասին՝ շատ կարևոր
է անդրադառնալ դրանց գործառույթային տարբերություններին, քանի որ, ինչ-
պես արդեն նշվեց, հենց դրանց անտեսումն է հանգեցնում դարձվածքի և բառի
նույնացմանը:

Դարձվածային միավորի կարևորությունը գիտակցել են շատ ու շատ
գիտնականներ: Դեռ XVI դարում Ա. Էստյենը գրել է այն մասին, որ դարձվածքը
կարող է սեղմ ձևով արտահայտել բարդ և տարողունակ հասկացություն¹⁵: Իսկ

Պ. Լ. Բոկլերը հատկապես կարևորել է դարձվածային միավորի՝ որպես
լեզվական հաղորդակցման միջոց ծառայելու հատկությունը¹⁶: XVIII դարի
տեսաբանները գտնում էին, որ դարձույթները (այլաբանությունները), ինչպես
նաև դարձվածքները վերացական մտքի կազմավորման կարևոր գործոններից

¹⁴ Տե՛ս Ա. Դ. Назарян, նշվ. աշխ., էջ 17:

¹⁵ Տե՛ս H. Estienne, La precellence du langage françois, P., 1896, էջ 245:

¹⁶ Տե՛ս P. L. Beauclair, Cours de gallicismes. Francfort, 1794-1796, T. 1, էջ VIII:

են, որ պատկերավոր արտահայտությունները «մտքի բաղկացուցիչ մասն են, որոնք հարաբերակցվելով հենց իրականության հետ, ավելի ճշմարիտ ու ավելի անկեղծ են դառնում»¹⁷:

Դարձվածքները, շնորհիվ իրենց հարուստ արտահայտչական հնարավորությունների, լայնորեն գործածվում են գեղարվեստական գրականության մեջ: Դրանք շատ կարևոր տեղ են գրավում բազմաթիվ հեղինակների ստեղծագործություններում ու նրանց լեզվի և ոճի անբաժան տարրն են: Այդ հեղինակների շարքում կարող ենք հիշատակել Ռաբլեի, Մոնտեմի, Կոռնելի, Ռասինի, Մոլիերի, Լաֆոնտենի, Բուալոյի, Սեվինյեի, Ռուսսոյի, Վոլտերի, Ռոժե Մարտեն դյու Գարի, Լուի Արագոնի, էրվե Բազենի և այլոց անունները:

Ասվածը վկայում է այն մասին, որ այն տեսակետը, ըստ որի դարձվածքները «լեզվական ավելցուկներ» են, բոլորովին անհիմն է: Ամենակտրուկ ձևով այս միտքն արտահայտել է Վ. Ս. Նիկիտինը. «Դարձվածքը լեզվական համակարգում երկրորդական նյութ է... Դարձվածքները լեզվի մեջ մտնում են լեզվի համար էական երևույթներ չստեղծելով, ... դարձվածքները չեն հանդիսանում լեզվի համակարգային նյութը: Լեզվից դարձվածքների դուրսբերումը նրա համար հաղորդակցական կորուստ չի առաջացնի»¹⁸: Սի շարք այլ հետազոտողներ նույնպես, կիսելով այս տեսակետը, գտնում են, որ լեզուն միայն տրամաբանական տեղեկատվության միջոց է, սակայն հարկ է նշել, որ դա լեզվի միակողմանի, սխալ ըմբռնման արդյունք է, որն էլ իր հերթին հանգեցնում է դարձվածային միավորի սխալ ըմբռնմանը: Դեռ վաղուց լեզվաբանության մեջ համոզիչ կերպով ապացուցվել է, որ բնական լեզուն ոչ միայն որոշ փաստեր է հաղորդում, այլ նաև արտահայտում է վերաբերմունք այդ փաստերի նկատմամբ: Գ. Գաբելենը նշում է, որ «լեզվով մարդը ոչ միայն ինչ-որ բան է արտահայտում, այլև արտահայտում է ինքն իրեն»¹⁹: Ասվածից հետևում է, որ լեզվում հուզականն ու արտահայտչականը նույնքան կարևոր են, որքան բանականն ու տրամաբանականը²⁰: Եթե դարձվածքի տեղի ու դերի հարցը քննենք այս տեսանկյունից, ապա պարզ կդառնա, որ դարձվածքները ոչ թե «լեզվի ավելցուկներ» են, այլ կարևոր արտահայտչական միջոցներ, որոնք անհրաժեշտ են ցանկացած լեզվին: Եվ իրոք, դարձվածքները բնորոշ են բոլոր լեզուներին՝ անկախ

¹⁷ F. Gohlz, Les transformations de la langue française pendant la deuxième moitié du XVIII siècle (1740-1789), P., 1903, p. 171.

¹⁸ Տես Վ. Մ. Никитин, նշվ. աշխ., էջ 69:

¹⁹ Տես Վ. В. Виноградов, Русский язык: Грамматическое учение о слове, М.-Л., 1947, էջ 18-19:

²⁰ Տես S. Ullmann, Précis de sémantique française, Berne, 1959, էջ 147:

նրանց զարգացման մակարդակից: Դա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ դարձվածաբանությունը լեզվի անջակտելի մասն է:

Դարձվածաբանության գործառույթային դերը ճիշտ հասկանալու համար պետք է նախ և առաջ ճշտել դարձվածային միավորների ծագման առանձնահատկությունները, ինչպես նաև դարձվածապաշարի և բառապաշարի միջև եղած տարբերությունները տվյալ պլանում:

Դարձվածային միավորի ծագման գործընթացում վճռորոշ դեր են խաղում արտալեզվական գործոնները և առաջին հերթին, խոսողների պահանջ-մոնջները պատկերավոր-արտահայտչական միջոցներով: Իսկ դարձվածաբանական համակարգի զարգացման ու հարստացման տեմպերը պայմանավորված են այն բանով, թե տվյալ պատմական ժամանակաշրջանում որքանով է մեծ այդ միջոցների նկատմամբ եղած պահանջը:

Այս ամենը վկայում է, որ դարձվածապաշարն ու բառապաշարը ծագումնաբանական պլանում ունեն էական տարբերություններ, որոնք պայմանավորված են լեզվում ունեցած նրանց տարբեր գործառույթային դերով: Բառապաշարը ծառայում է առավելապես լեզվի մտավոր (ինտելեկտուալ) ոլորտին, իսկ դարձվածապաշարը՝ հուզական: Ըստ այդմ էլ բառն ամենից առաջ ծառայում է տվյալ հասկացության անվանման համար, իսկ դարձվածքը՝ նրա պատկերավոր-արտահայտչական բնութագրման: Սակայն, ինչպես հայտնի է, դարձվածքները լեզվի բազմագործառական միավորներն են, և նրանց մի մասը զրկված չէ նաև անվանողական գործառույթից: Այդուհանդերձ, դարձվածքների հիմնական գործառույթը պատկերավոր-արտահայտչական գործառույթն է:

Դարձվածաբանական համակարգի զարգացումն ուղեկցվում է ինչպես նոր դարձվածային միավորների ծագումով, այնպես էլ արդեն գոյություն ունեցող որոշ դարձվածային միավորների գործածությունից դուրս գալով: Տարածամանակյա հետազոտությունները ցույց են տալիս, որ դարձվածապաշարն այս առումով ևս տարբերվում է բառապաշարից:

Բառը ծագում է նոր հասկացություն անվանելու համար, այդ իսկ պատճառով այն լեզվում մնում է այնքան, մինչև որ տվյալ հասկացությունը հնանում է և անհետանում: Այսպիսով, բառի և նրա անվանած հասկացության անհետացումը փոխադարձ պայմանավորված գործընթաց է, որը ենթարկվում է հստակ օրինաչափությունների և կապված է բառի՝ որպես լեզվական անվանողական միավորի, գործառույթային բնույթի հետ:

Մինչդեռ դարձվածային միավորների հնացման և անհետացման գործընթացը պայմանավորված է այլ օրինաչափություններով: Ինչպես ցույց են տալիս փաստերը, դարձվածքների՝ գործածությունից դուրս գալու գործընթացը կախված չէ նրանց անվանած հասկացությունից կամ վերջինիս անհետա-

ցումից: Յուրաքանչյուր դարձվածային միավորի հիմքում ընկած է որոշակի պատկեր²¹, իսկ լեզվում նրա կյանքը շարունակվում է այնքան, քանի դեռ չի հնացել նրա պատկերը: Այդ իսկ պատճառով դարձվածքը գործածությունից դուրս է գալիս ոչ թե այն պատճառով, որ նրա անվանած հասկացությունը հնանում է, այլ այն պատճառով, որ նա կորցնում է իր արդիականությունը որպես պատկերավոր-արտահայտչական միջոց լեզվի զարգացման տվյալ պատմական փուլում:

Ասվածը թույլ է տալիս ճշտել լեզվի բառային և դարձվածային կազմերի անհավասարաչափ զարգացման պատճառները:

Բառերը, որոնք հիմնականում լեզվի անվանողական միջոցներն են և կապված են իմացության գործընթացի հետ, արտահայտում են ավելի կայուն և երկարատև հասկացություններ:

Իսկ դարձվածաբանությունը, որի զարգացման մեջ վճռորոշ դեր ունեն արտալեզվական գործոնները, ավելի շատ է ենթակա փոփոխությունների, քանի որ լեզվի այն ոլորտը, որին նա ծառայում է, կապված է առավելապես խոսողների հույզերի ու զգացմունքների հետ: Դարձվածքները, լինելով հուզաարտահայտչական միջոցներ, ամենից առաջ արտահայտում են խոսողի վերաբերմունքը տվյալ հասկացության նկատմամբ: Եվ քանի որ հասկացության նկատմամբ վերաբերմունքն ավելի հաճախ է փոխվում, քան հենց ինքը հասկացությունը, ապա ինքնընտանրան հասկանալի է, որ դարձվածապաշարն ավելի արագ է համարվում, քան բառապաշարը²²: Համաձայն Ֆ. Բրյունոյի կատարած հաշվարկների, «Ռոլանդի երգի» (XII.) 4802 տողերում գործածվել են 1775 տարբեր (չկրկնվող) բառեր, որոնցից 408-ը անհետացել են XX դարում, ինչը կազմում է 22,98%: Իսկ հնացած դարձվածքներն այդ ստեղծագործություններում կազմում են 81,82%²³:

Դարձվածային կազմի մասին խոսելիս շատ կարևոր է հիշատակել ևս մի առանձնահատկության մասին, որով դարձվածաբանությունը էականորեն տարբերվում է բառապաշարից:

Չնայած դարձվածաբանության զարգացումն ուղեկցվում է ինչպես նոր միավորների ծագումով, այնպես էլ արդեն գոյություն ունեցող միավորների որոշ մասի հնացմամբ, այնուամենայնիվ առաջինների թիվը միշտ ավելի մեծ է լինում, որով էլ հենց ապահովվում է լեզվի դարձվածային կազմի մշտական քա-

²¹ Տե՛ս Գ. Յ. Черданцева, Язык и его образы (Очерки по итальянской фразеологии). М., 1977, էջ 84:

²² Տե՛ս Ե. Ա. Ларин, Очерки по фразеологии / История русского языка и общее языкознание. – М., 1977, էջ 143:

²³ Տե՛ս «Histoire de la langue et de la littérature française des origines à 1900». Publ. par L. Petit de Julleville. – P., 1896. T. II, էջ 487:

նակական աճը: Դարձվածաբանությունը, անընդհատ համալրվելով, ընդգրկում է ավելի ու ավելի շատ հասկացություններ: Սակայն ինչպես վկայում են փաստերը, ոչ բոլոր հնացած դարձվածքներն են փոխարինվում նույն հասկացությունն արտահայտող նոր դարձվածքներով: Դարձվածային միավորի հնացման արդյունքում տվյալ հասկացությունը կարող է դուրս մնալ դարձվածաբանական համակարգից:

Սակայն բառապաշարում պատկերը բոլորովին այլ է: Բառը չի կարող հնանալ, եթե չի հնացել նրա անվանած հասկացությունը: Այն կարող է փոխարինվել հոմանիշ բառով ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական պատճառներով:

Բառի և դարձվածքի հարաբերակցության հարցի հստակ պատկերացման համար շատ կարևոր է նաև դարձվածքի և բառի բովանդակային կառուցվածքների ուսումնասիրությունը հատկապես հարանշանակության պլանում:

Ինչպես արդեն նշվեց, համարժեքության տեսության կողմնակիցներն ամտեսում են դարձվածքի և բառի միջև եղած իմաստային տարբերությունները: Սակայն հայտնի է, որ դարձվածային միավորն օժտված է առանձնահատուկ իմաստային կառուցվածքով, որը բնորոշ է միայն նրան՝ որպես լեզվի տարակազմ միավորի:

Դարձվածային իմաստի հարցը դարձվածաբանության տեսության կարևորագույն և արդիական հարցերից է: Շատ դարձվածաբաններ զբաղվել են այդ հարցի ուսումնասիրությամբ և նշել, որ դարձվածային իմաստը տարբերվում է բառիմաստից իր յուրահատկությամբ: Այսպես, Վ. Լ. Արխանգելսկին առաջ է քաշում այն թեզը, ըստ որի դարձվածային իմաստն օժտված է յուրահատուկ հատկանիշով, տարբերվում է բառային իմաստից և ներկայացնում առանձին լեզվաբանական կարգ²⁴:

Դարձվածային իմաստի առանձնահատկությունն ամենից առաջ շրջապատող իրականության արտացոլման յուրահատուկ ձևի մեջ է, ինչը հիմնականում պայմանավորված է նրա բաղադրիչների փոխներգործությամբ: Ինչպես հայտնի է, դարձվածային իմաստում առկա են երեք տարր՝ հիմնանշանակային, նշանակային և հարանշանակային, որոնք կազմում են համապատասխանաբար՝ դարձվածային միավորի հիմնանշանակային, նշանակային և հարանշանակային կողմերը²⁵:

Ինչպես բառերը, այնպես էլ դարձվածային միավորները կարող են անվանել արտալեզվական իրականության տարբեր տարրեր: Դարձվածային միա-

²⁴ Տես В. Л. Архангельский, Устойчивые фразы в современном русском языке.—Ростов II/Д, 1964, էջ 124:

²⁵ Տես А. В. Кукин, Английская фразеология, էջ 310:

վորի հիմնանշանակային հայեցակերպի հիմքում ընկած է նախնական բառակապակցության նշալի (դենոտատի) փոխարինումը և նրա հատկանիշների փոխադրումը նոր նշալին, որը պայմանավորված է տվյալ բառակապակցության լրիվ կամ մասնակի իմաստափոխությամբ:

Դարձվածային միավորի իմաստի նշանակային կողմն արտահայտվում է նրա իմաստային բովանդակության մեջ նշվողի վերաբերյալ որոշակի (կոնկրետ կամ վերացական) հասկացություն կրելու ունակության մեջ:

Դարձվածային միավորի անվանողական և նշանակային կողմերի միջև գոյություն ունի որոշակի փոխադարձ կապվածություն և փոխներգործություն: Այդ իսկ պատճառով նշվողի փոփոխումն ազդում է դարձվածային միավորի նշանակային բովանդակության վրա, իսկ նշանակային բովանդակության փոփոխությունը հանգեցնում է նշվողի փոփոխմանը: Սակայն տարբեր դարձվածային միավորների անվանողական և նշանակային կողմերի հարաբերակցությունը միևնույնը լինել չի կարող: Անվանողական կողմը գերիշխում է կոնկրետ հասկացություններ արտահայտող դարձվածային միավորներում, իսկ ավելի թույլ արտահայտված է վերացական հասկացությամբ դարձվածքներում: Այսինքն որքան կոնկրետ հասկացություն է արտահայտում դարձվածքը, այնքան հարուստ է նրա անվանողական բովանդակությունը, իսկ վերացական հասկացություն արտահայտող դարձվածքներում գերիշխողը նշանակային կողմն է:

Ի տարբերություն բառերի, դարձվածային միավորների մեծ մասը անվանողական պլանում արտահայտում է ավելի կոնկրետ հասկացություններ, քանի որ, ինչպես հայտնի է, բառը հարաբերակցվում է ոչ թե կոնկրետ առարկային, այլ համանման առարկաների դասին, հետևաբար դարձվածային անվանումն ավելի կոնկրետ է, քան բառայինը:

Դարձվածային անվանման ավելի կոնկրետ բնույթը բառայինի համեմատ պայմանավորված է նաև դարձվածքի և բառի իմաստների նշանակային տարբերություններով: Բառերը հիմնականում արտահայտում են սեռային հասկացություններ, իսկ դարձվածքները՝ տեսակային: Այդ իսկ պատճառով ընդհանրապես մարդ էակի անվանման համար ֆրանսերենում գոյություն ունեն միայն մի քանի դարձվածային միավորներ (*Utre social, Utre pensant*), մինչդեռ որևէ հատկանիշի համաձայն, մարդու անվանման համար (մասնագիտական, սոցիալական, ֆիզիկական, մտավոր) կան բազմաթիվ դարձվածքներ: Այսպես, *voleur* բառին հոմանիշ *rat d'htel* և *voleur n la tire* «գրպանահատ» դարձվածքները նշանակում են ոչ թե գող ընդհանրապես, այլ գող, որը

²⁶ Տես А. Г. Назарян, նշվ. աշխ., էջ 194:

«մասնագիտացել է» գողոթյան կոնկրետ տեսակում: Սակայն ֆրանսերենի դարձվածային ֆոնդում, չնայած սահմանափակ քանակությամբ, կան նաև այնպիսի դարձվածքներ, որոնք արտահայտում են սեռային հասկացություններ և ունեն ընդհանրացնող իմաստ, ինչպես բառերը: Օրինակ՝ *les hites des airs* «թռչուններ», *fille d'Eve* «կին» և այլն:

Դարձվածային միավորի հարանշանակային իմաստն արտահայտում է խոսքի կրողի հանդեպ խոսողի վերաբերմունքը: Իմաստի հարանշանակային կողմի հատկանիշներն են՝ պատկերավորությունը, ոճական նրբերանգը, արտահայտչականությունը, որոնցից առաջին երկուսը կամ ընտրական են, իսկ երրորդը՝ պարտադիր: Դարձվածային միավորի պատկերը կարող է հնամալ կամ ոճապես չեզոք լինել, բայց այն միշտ պահպանում է արտահայտչականությունը և դրա հետ մեկտեղ՝ հարանշանակությունը, որը դարձվածքի իմաստի անբաժան մասն է: Այս մասին վկայում է նաև Ի. Ի. Չերնիշևան՝ նշելով, որ հարանշանակային բաղադրիչը դարձվածային իմաստի գլխավոր բաղադրիչն է²⁶:

Բառիմաստի և դարձվածային իմաստի միջև տարբերություններ կան նաև հարանշանակային պլանում: Ինչպես արդեն նշվեց, հարանշանակային կողմը դարձվածային իմաստի անբաժան մասն է, մինչդեռ այն միշտ չէ որ առկա է բառիմաստում: Բացի այդ, դարձվածային հարանշանակությունն ավելի հարուստ է, քան բառայինը, ինչի շնորհիվ էլ դարձվածային միավորն ունի մեծ հուզաարտահայտչական ներգործություն: Ինչպես օրինակ՝ *sof* «հիմար» — *2ne b2tn*, *tUte de linotte*, *grosse bUte*; *fanfaron* «պարծենկոտ» — *casseur d'assiettes*, *abatteur de quilles*, *vendeur de fumee*:

Վերը ասվածը թույլ է տալիս եզրակացնել, որ դարձվածքն ունի ավելի բարդ իմաստային կառուցվածք, քան բառը, և ուրեմն՝ այն օժտված է ավելի հարուստ իմաստային բովանդակությամբ, ինչն էլ մեկ անգամ ևս ապացուցում է, որ դարձվածային իմաստը որակապես տարբերվում է բառիմաստից, իսկ դարձվածքը՝ բառից:

²⁶ Տե՛ս Ի. Ի. Чернишова, Актуальные проблемы фразеологии. Вопросы языкознания. 1977. N 5, էջ 38: